Քննարկված է
Խորհրդի 16.01.15 թիվ 03 նիստում

Նախագահ Ա. Եսայան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՀՀ ԿԳՆ <ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ> ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույնով սահմանվում է ՀՀ ԿԳՆ <**Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան**> **ՊՈԱԿ-ի** (այսուհետ՝ հաստատություն) տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգը:
2. Մրցույթը կազմակերպում և անցկացնում է հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ):
3. Մրցույթն անցկացնելիս՝ Խորհուրդը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1494-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության» կարգով, սույն ընթացակարգով և այլ իրավական ակտերով:
4. Հաստատության խորհրդի նախագահը մրցույթից մեկ շաբաթ առաջ ՀՀ կրթության և գիտության նախարարության /այսուհետ՝ լիազոր մարմին/ անձնակազմի կառավարման ստորաբաժանումից հանձնման-ընդունման ակտով ստանում է մրցույթին մասնակցելու համար ներկայացված մասնակիցների անվանացանկը և դիմում-հայտերի փաստաթղթերի փաթեթը.
   1) դիմում՝ լիազորված մարմնի ղեկավարի անունով.
   2) անձնագրի պատճենը.
   3) հավաստագրի պատճենը.
   4) տվյալ հաստատության հինգ տարվա զարգացման ծրագիր.
   5) հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (առկայության դեպքում).
   6) աշխատանքային գրքույկի պատճենը:
5. Խորհրդի նախագահը նախքան մրցույթը հրավիրում է խորհրդի նիստ, որի ժամանակ ուսումնասիրվում է մրցույթի մասնակիցների փաստաթղթերի փաթեթը:
6. Խորհրդի որոշմամբ հաստատվում և հրապարակվում է մրցույթի մասնակիցների անվանացանկը:
7. Մրցույթին առանց քվեարկության իրավունքի մասնակցում է լիազորված մարմնի ներկայացուցիչը, ով մինչև մրցույթն սկսելը խորհրդի նախագահին է հանձնում մրցույթի անցկացման համար նախատեսված կնիքը և ձայնագրիչը:
8. Մասնակիցը մրցույթին ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:
9. Խորհրդի քարտուղարը, մինչ մասնակիցների հետ հարցազրույց սկսելը, ստուգում է հանձնաժողովի անդամների և մասնակիցների ներկայությունը:
10. Խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:
11. Եթե սահմանված ժամկետում մասանակիցներից ոչ ոք չի ներկայացել մրցույթին մասնակցելու համար, ապա խորհուրդն ընդունում է մրցույթը չկայացած համարելու մասին որոշում, որն ուղարկվում է լիազոր մարմնի ղեկավարին: Կարգի համաձայն հայտարարվում է նոր մրցույթ:
12. Մրցույթի ընթացքը ձայնագրվում է:

13. Մասնակիցը խորհրդին բանավոր ներկայացնում է ուսումնական հաստատության զարգացման իր ծրագիրը:
14. Խորհուրդը մասնակցի հետ անցկացնում է հարցազրույց՝ նրա ներկայացրած զարգացման ծրագրի և տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի շրջանակներում:
15. Հարցազրույցն արձանագրվում է, որտեղ ամրագրվում են մասնակցին տրված հարցերը, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ մասնակցի տված պատասխանը:
16. Խորհրդի բոլոր անդամներն ունեն մասնակցին հարցեր տալու իրավունք՝ հաստատության զարգացման ծրագրի շրջանակում:
17. Մասնակցին տրված հարցերի պատասխանների արդյունքները գնահատվում են Խորհրդի յուրաքանչյուր անդամի կողմից՝ կողմ կամ դեմ /Ձև N 1/:
18. Մեկից ավելի նշում արված, կամ որևէ նշում չարված քվեաթերթիկը համարվում է անվավեր:
19. Խորհրդի նախագահը, քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո՝ մինչև նիստի ավարտը, մասնակիցների ներկայությամբ հրապարակում է փակ քվեարկության արդյունքները:
20. Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը (մասնակիցները), ով (ովքեր) ստացել է (են) քվեարկությանը մասնակցած խորհրդի անդամների կեսից ավելիի կողմ ձայները:
21. Եթե մասնակիցներից ոչ ոք քվեարկության արդյունքում չի հավաքել խորհրդի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելիի կողմ ձայները, ապա խորհուրդն ընդունում է մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին որոշում և այդ որոշումն ուղարկում է լիազորված մարմին: Կարգի համաձայն հայտարարվում է նոր մրցույթ:
22. Խորհուրդը քվեարկության արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) վերաբերյալ, գրավոր բողոքի բացակայության դեպքում, ընդունում է որոշում, կազմում եզրակացություն /Ձև N 2/, և սույն ընթացակարգի 4-րդ կետով սահմանված փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է լիազոր մարմին և մրցույթը համարվում է ավարտված:
23. Եզրակացությունը և արձանագրությունները ստորագրում են խորհրդի նախագահը, քարտուղարը և անդամները:
24. Խորհրդի անդամները հատուկ կարծիք ունենալու դեպքում նշում են այդ մասին՝ ստորագրության կողքը գրառելով <Հատուկ կարծիքը կցվում է> բառերը: Արձանագրությանը կից ներկայացվում նաև Խորհրդի անդամների հատուկ կարծիքները:
25. Մրցութի արդյունքները կարող են գրավոր բողոքարկվել մասնակցի /իր արդյունքների մասով/, լիազորված մարմնի ներկայացուցչի կամ հանձնաժողովի անդամի կողմից՝ հարցազրույցի փուլն ավարտելուց հետո մեկ ժամվա ընթացքում:
26. Խորհրդի նախագահը հանձման-ընդունման ակտով լիազոր մարմին է հանձնում կնիքը, ձայնագրիչը, մրցութի անցկացման փաստաթղթերը՝
    1) հավակնորդի (հավակնորդների) ու խորհրդի անդամների ներկայության մասին արձանագրությունը.
    2) քվեարկությունների արդյունքների մասին արձանագրությունը.
    3) մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին որոշումը.
    4) մրցույթը չկայացած համարելու մասին որոշումը (չկայանալու դեպքում).
    5) քվեաթերթիկները.
    6) մրցույթի արդյուքների հրապարակման թերթիկը.
    7) բողոքի առկայության դեպքում՝ գրավոր բողոքը.
    8) այլ փաստաթղթեր:

Ձև 2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25ի N 1494-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության 23-րդ կետի համաձայն՝ մրցութային հանձնաժողովն արձանագրում է, որ 201 թ. .... –ին անցկացվեց Հայաստանի Հանրապետության կրթության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթը:

Կառավարման խորհրդն արձանագրում է մրցույթի արդյունքը՝

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցը (մասնակիցները)՝

NN	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը	Անձնագրային տվյալները	Հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի քվեարկության արդյունքները	
				կողմ	դեմ
1					
2					
3					

Խորհրդի քարտուղար ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի նախագահ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Ձև 1

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Մրցույթի մասնակցի ----------
(անուն, հայրանուն,ազգանուն)

☐ ԱՌՈՂՄ

☐ ԴԵՄ

Խորհրդի անդամ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի քարտուղար ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Խորհրդի նախագահ ---------- ----------
(անուն, ազգանուն) (ստորագրություն)